ՏԽՈՒՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ
ՊԲՀ-Ի 2-ՐԴ ՀԱՄԱՐԻ ՇՈՒՐՋ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 2005 թ. №2-ի «Ղազար Փարպեցու երկերի արևելահայերեն վերջին թարգմանության հանգամանքները» հոդվածի վերջում տողատակին տրված ծանոթագրությունն անհիմն ու վրդովեցուցիչ է, այսպես. «ՊԲՀ-ի խմբագրության կողմից. Ցավով պիտի ընդգծել, որ մասնագիտական քննարկում, խմբագրում և գրախոսում չունենալու պատճառով անկարելի սխալներով են հրատարակվել նաև Հովհան Մամիկոնյանի, Ասողիկի, Վարդան Արևելցու պատմագրությունների աշխարհաբար թարգմանությունները» (էջ 181): Սույն ծանոթագրությունն ապացուցում է, որ հանդեսի խմբագրությունը ի դեմս խմբագրի պաշտոնակատարի (Պ. Մուրադյան) նույնիսկ չի բացել Վարդան Արևելցու «Տիեզերական պատմության» մեր թարգմանությունը (Երևանի պետհամալսարանի հրատ., 2003), որի հետևանքով հանգել է նման «լուրջ» եզրակացության: Սույն գիրքը խմբագրել է մերօրյա լավագույն գրաբարագետներից մեկը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ս. Ղազարյանը: Ես պահանջում եմ, որ խմբագրությունը նման դեկլարատիվ հայտարարությամբ ոչ թե վարկաբեկի հեղինակին, այլ բարի լինի և փաստերով ցույց տա Վարդան Արևելցու թարգմանության մեջ տեղ գտած «անկարելի սխալները», որի համար ես երախտապարտ կլինեմ:

«Պատմա-բանասիրական հանդես»-ը թե՛ իր բովանդակությամբ, թե՛ իր գիտական մակարդակով միշտ էլ եղել է հայագետների սիրելի պարբերականներից մեկը: Ցավոք, 2005 թ. №2-ի մասին նույնը չի կարելի ասել: Անդրադառնանք մի քանի էական հարցերի: Նախ, անհասկանալի է ինչ նպատակ է հետապնդում հրատարակել Ղ. Փարպեցու պատմության թարգմանության մասին վերոհիշյալ «գրախոսությունը», երբ ուսումնասիրությունը լույս է տեսել... 1982 թ.: [Ի դեպ, եթե խմբագրի պաշտոնակատարն այդքան «սկզբունքային», «հետևողական», «ամենատես ու ամենագետ է», ապա ինչո՞ւ է «աչքաթող» արել և անպատասխան թողել ՊԲՀ-ի նախորդ համարում (№1-ում) հրատարակված ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի հոդվածում իր գիտական «պրպտումների» մասին անդրադարձները և դրանց տված գիպուկ որակումը, և, ընդհանրապես, ինչո՞ւ է խուսափում իր գործունեությանը տարիներ շարունակ տրվող գնահատականներին գրավոր պատասխանելուց]: Եվ, ապա, կարծում ենք, ժամանակավրեպ է նաև հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված մի քանի հոդվածների հրատարակությունը, որոնցում չես հանդիպի գոնե մի տեղեկության, որն այսօր նորություն լինի (տե՛ս, օրինակ, Ե. Տեր-Մինասյանի, Ն. Մառի, Լ. Սադոյանի հոդվածները): Տեղին չէ նաև հանդեսի սուզ

էջերում դրախոսությունների բաժնին հատկացված շռայլությունը՝ շուրջ 50 էջ (էջ 290–339), որոնցում միայն գովասանքներ ես կարդում...

Երբ թերթում ես հանդեսի խնդրո առարկա համարը, ակնհայտ երևում է, խմբագրի պաշտոնակատարի սուբյեկտիվ մոտեցումը հոդվածների և հոդվածագիրների ընտրության հարցում: Աչքի են զարնում նրա՝ տեղի-անտեղի իրեն ներկայացնելու, այլոց հոդվածներում իր աշխատանքները հղելու մարմաջը և, ապա տխուր հետևությունը՝ հանդեսի վրացամետ ուղղվածությունը: Վերջին մտքի առնչությամբ թեկուզև նշենք հետևյալը. այսպես, ինչ կարիք կար հանդեսի 4-րդ էջում բերելու Ա. Շանիձեի խոսքը, որը բնավ էլ հայանպաստ չէ: Կորյունը վկայում է, որ Մ. Մաշտոցը գրեր է սանդծել նաև հարևան վրացիների (նաև աղվանների) համար, իսկ Շանիձեն 1962 թ. գրում է. «...Ձճշգրտված հարցերը թող հետազոտեն գիտականները: Սա ամենևին չի խանգարում մեզ, որ ուրախությամբ միանանք հայերի ազգային տոնին և ջերմորեն շնորհավորենք... Հայերը, վրացիների պես, ունեն իմաստությամբ կազմված այբուբեն, որով ստեղծված է ազգային հարուստ գրություն...»:

Արդեն իսկ ասվածը խոսում է այն մասին, որ ՊԲՀ-ի 2005 թ. № 2-ի բովանդակությունը լուրջ և տխուր մտորումների տեղիք է տալիս:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հայագիտության անխոնջ մշակ, բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Թոսունյանի խմբագրությանը հասցեագրած նամակում արծարծված հարցերն ընդունելի և տեղին են: «Տխուր մտորումների» այդ շարքը կարելի է կրկնապատկել ու եռապատկել: Առավել ևս, որ ՊԲՀ-ի խմբագրի պաշտոնակատար պրոֆեսորի 5-ամսյա «բուռն» գործունեությունը խմբագրությանը, նրա հեղինակային կազմին և հայագետներին հասցրեց թե՛ բարոյական և թե՛ ֆինանսական դգալի կորուստներ (վերջինիս կապակցությամբ պարզաբանենք. հանդեսը տպագրվում է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի միջոցներով, և այսօր, փաստորեն, այս անձի ծավալած գործունեության հետևանքով կանգնած է այդ հովանավորությունից զրկվելու իրական վտանգի առջև): Եվ քանի որ «թյուրիմացաբար» ՊԲՀ-ի խմբագրի պաշտոնը «ժամանակավոր» գրված և այն հարկագրաբար թողած ամենա-ամենագետն այլևս անցյալ է, հիշենք ու հիշեցնենք. հանրությանը վաղուց է հայտնի այլոց վարկաբեկող, գիտության «նվիրյալների», ծախու գրչակների և գործիչների անփառունակ վախճանը...

ԱՆ. Զ.